ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԱՅՖԱՐԵՍ ՔՈՆՍԱԼԹ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF ARMENIA
« IFRS CONSULT»
LIMITID LIABILITY
COMPANY

/Հայաստանի Աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ /ՀԿ խորհրդի 16.12.2025թ-ի Թիվ 76-Ա որոշման ռեեստրում գրանցման ամսաթիվը՝ 16.12.2025թ, հիմնական գրանցման համարը Թիվ /1251016/

ՀՎՀՀ 02936838

ք. Երևան, Արգիշտի 7/4 , բն 12

Անկախ աուդիտորի եզրակացություն

«Սահակյանշին» ՓԲԸ բաժնետերերին

Վերապահումով կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Սահակյանշին» ՓԲԸ այսուհետ՝ «Ընկերություն», ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ «Վերապահումով կարծիք»-ի հիմք բաժնում նկարագրված հարցերի հնարավոր ազդեցությունից, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն (ՖՀՄՍ-ներ):

Վերապահումով կարծիքի հիմք

Մենք հնարավորություն չենք ունեցել հետևելու պաշարների գույքագրման ամբողջական գործընթացին տարվա վերջում և անկարող էինք իրականացնել այլընտրանքային ընթացակարգեր, որպեսզի ինքներս համոզվեինք պաշարների առկայության և քանակի վերաբերյալ 2025թ-դեկտեմբերի 31-ի դրությամբ, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ ներառված են 14525804,0 հազ դրամ գումարով: Նշված հարցի արդյունքում, մենք անկարող էինք որոշել արդյոք որևէ ճշգրտում անհրաժեշտ է պաշարների, ինչպես նաև դրա հնարավոր հետևանք կուտակված շահույթի ցուցանիշի, ինչպես նաև տարվա շահույթի զծով ֆինանսական հաշվետվությունների մեջ:

Ընկերության ֆինանսական վիճակի հաշվետվության մեջ հիմնական միջոցների կազմում ներառված են հաշվեկշռային արժեքով 31.12.2024թ-ի դրությամբ 182436,0 հազ. դրամ, 31.12.2025թ-ի դրությամբ 186676,0 հազ. դրամ, ներդրումային գույք, որոնք պետք է արտացոլվեն իրական արժեքով:

Մենք անկարող էինք իրականացնել այլընտրանքային ընթացակարգեր, որոշելու ներդրումային գույքի իրական արժեքը , դրա հետ կապված հետաձգված հարկերը և որոշելու դրա ազդեցությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվության, ինչպես նաև դրա հնարավոր հետևանք կուտակված շահույթի, տարվա շահույթի գծով ֆինանսական հաշվետվությունների մեջ:

Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այս ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք ընկերությունից՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջներին համապատասխան համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի հանրապետությունում կիրառելի ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները համաձայն այդ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Անընդհատության հիմունքին վերաբերող էական անորոշություն

Մեր ուշադրությունը գրավվեց ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 4.8.4-ին, որտեղ նշվում է, որ Ընկերության պարտավորությունները գերազանցել են իր ընդհանուր ակտիվները 31.12.2024թ-ի դրությամբ 225314,0 հազար դրամ, 31.12.2025 թ-ի դրությամբ 1108194,0 հազար դրամ:

Վերոնշյալ հարցերի հետևանքով, ինչպես նաև Ծանոթագրություն 4.8.4--ում, բերված այլ հարցերի առկայությունը էական անորոշություններ է առաջացնում Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Մեր կարծիքը չի ձեւափոխվել այս հարցի կապակցությամբ:

Այլ հանգամանք

Ընկերության համադրելի տեղեկատվությունը՝ 2024թ-ի ֆինանսական հավետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որի վերաբերյալ տրվել է ձևափոխված կարծիք 2025թ հունիսի 11-ին:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև

հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի ընկերությունը լուծարելու կամ ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվության աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական , երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացված աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում կասկածամտություն: Ի լրումն մենք նաև՝

-Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք կհանդիսանան աուդիտորի կարծիք արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերելու ռիսկը ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

-Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե կազմակերպության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

-Գնահատում ենք կիրառած հաշվապահական հաշվառման սկզբունքների տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

-Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելը, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա գնահատում արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե աուդիտորը եզրահանգում է, որ առկա է էական անորոշություն, ապա պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների

համապատասխան բացահայտումներին, իսկ եթե այդ բացահայտումները բավարար չեն, ապա ձևափոխել կարծիքը: Աուդիտորի եզրահանգումները հիմնված են մինչև աուդիտորի եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը

-Երբ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվում են ճշմարիտ ներկայացման հիմունքի համաձայն, գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործառույթների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը

-ի լրումն այլ հարցերի կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակցում ենք աուդիտորի առաջադրանքների պլանավորած շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի ներառյալ ներքին հսկողության վերաբերող նշանակալի թերությունները:

«ԱՅՖԱՌԵՍ ՔՈՆՍԱԼԹ» ՍՊԸ

Գլխ. տնօրեն՝ Գ. Վարդանյան Աուդիտի ղեկավար՝ Լ. Շահոյան

Հայաստանի Հանրապետություն,
ք. Երևան, Արգիշտի 7/4 , բն 12
2026թ. հունիսի 19

<<ՍԱՀԱԿՅԱՆՇԻՆ>> ՓԲԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2025թ . դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

ԵՐԵՎԱՆ
2026

Բովանդակություն

	Էջ
Անկախ աւդիտորական եզրակացություն	2
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

<<ՍԱՀԱԿՅԱՆՇԻՆ>> ՓԲԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ

	ծանոթ.	2023թ (վերան)	2024թ (վերան)	2025թ
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	4,1	9 043 553	8 173 967	7 135 357
Ֆին վարձ, ստացվ. Հիմնական միջոցներ		0	0	0
Կենսաբանական ակտիվներ				
Ներդրումային գույք				
Ոչ նյութական ակտիվներ	4,2		0	0
Բաժնեմասնության մեթոդով հաշվառվող ներդրումներ				
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	4,3	1 327 918	965 011	1 098 604
Հետաձգված հարկային ակտիվներ	4,18	158 412	93 060	152 622
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ				
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**10 529 883**	**9 232 038**	**8 386 583**
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ	4,4	14 177 898	15 358 876	14 525 804
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	4,5	3 928 282	3 361 331	3 332 708
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ				
Մնացորդներ բանկերում և դրամարկղում	4,6	745 058	649 528	633 906
Այլ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	4,7	63 700	63 700	63 700
Այլ ընթացիկ ակտիվներ		22	94	18 764
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**18 914 960**	**19 433 529**	**18 574 882**
Ընդամենը ակտիվներ		**29 444 843**	**28 665 567**	**26 961 465**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)

Հազար դրամ

	ծանոթ.	2023թ (վերան)	2024թ (վերան)	2025թ
Սեփական կապիտալ և պարտավորություններ				
Կանոնադրական բաժնետիրական կապիտալ	4,8	71 741	71 741	71 741
Էմիսիոն եկամուտ	4,8	337 021	337 021	337 021
Վերագնահատման պահուստ		0		
Կուտակված շահույթ	4,8	-986 967	-645 454	(1 528 334)
Պահուստային կապիտալ		11378	11 378	11 378
Սեփական կապիտալի այլ տարեր				
Ընդամենը սեփական կապիտալ		-566 827	-225 314	-1 108 194
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	4,9	13 074 640	11 097 652	11 284 781
Ֆինանսական վարձակալության գծով վճարվելիք համախառն գումարներ				
Հետաձգված հարկային պարտավորություններ				
Այլ պարտավորություններ և ծախսումների գծով պահուստներ				
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ				
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		13 074 640	11 097 652	11 284 781
Ընթացիկ պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	4,10	374 935	15 829	115 829
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,11	16 371 861	17 655 637	16 584 701
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		5 817	9 016	4 887
Պահուստներ այլ պարտավորություններ և ծախսումների գծով	4,12	184 417	112 747	79 461
Այլ ընթացիկ ֆինանսական պարտավորություններ				
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		16 937 030	17 793 229	16 784 878
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		29 444 843	28 665 567	26 961 465

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից՝ 19.06.2026թ.և պետք է ընթերցվեն կից ծանոթագրությունների հետ միասին

Տնօրեն՝ Ս. Սահակյան

Գլխավոր հաշվապահ՝ Ս.Վրթանեսյան

«ՍԱՀԱԿՅԱՆՇԻՆ» "СААКЯНШИН" "SAHAKYANSHIN" 02224769

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծան որ.	2024թ	2025թ
Հասույթ	4.13.	2 538 390	583 809
Վաճառքի ինքնարժեք	4.14.	3 246 791	2 079 605
Համախառն շահույթ(վնաս)		(708 401)	(1 495 796)
Այլ եկամուտներ	4,15	2 970 499	3 762 215
Իրացման ծախսեր	4,16	361 814	244347
Վարչական ծախսեր	4,16	731 752	1 150 248
Այլ ծախսեր	4,16	176 709	1 193 807
Գործառնական գործունեությունից շահույթ(վնաս)		991 823	(321 983)
Ֆինանսական ծախսեր	4,17	577 292	609 624
Շահույթ(վնաս) մինչև հարկելը		414 531	(931 607)
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	4,18	73 018	(48 727)
Տարվա շահույթ(վնաս)		341 513	(882 880)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Ընդամենը համապարփակ արդյունք		341 513	(882 880)
Մեկ բաժնետոմսին բաժին ընկած բազային շահույթ			
Մեկ բաժնետոմսին բաժին ընկած նոսրացված շահույթ			

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից ՝ 19.06.2026թ.և պետք է ընթերցվեն կից ծանոթագրությունների հետ միասին

Տնօրեն՝ Ս. Սահակյան

Գլխավոր հաշվապահ՝ Ս.Վրթանեսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՌԵՊՈՒԲԼԻԿԱ АРМЕНИЯ ЕРЕВАН ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО
REPUBLIC OF ARMENIA YEREVAN CLOSED JOINT-STOCK COMPANY
«ՍԱՀԱԿՅԱՆՇԻՆ»
"СААКЯНШИН"
"SAHAKYANSHIN"
02224769

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հազար դրամ

	Բաժնետիրական կապիտալ	Սեփական կապիտալի այլ տարրեր	Վերագնահատումից պահուստներ	Պահուստային կապիտալ	Կուտակված շահույթ/(վնաս)	**Ընդամենը**
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վեր-ծ)	71 741	337 021		11 378	(986 967)	(566 827)
Մնացորդի ուղղում						-
Տարվա շահույթ/(վնաս)					341 513	341 513
Բաժնետոմսի թողարկում						-
Ներքին շարժեր						-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ						-
Ներքին շարժեր						-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ						-
Շահաբաժիմեր						-
Ներքին շարժեր						
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վեր-ծ)	71 741	337 021		11 378	(645 454)	(225 314)
Մնացորդի ուղղում						-
Տարվա շահույթ/(վնաս)		-			(882 880)	(882 880)
Բաժնետոմսի թողարկում						-
Ներքին շարժեր						-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ						-
Շահաբաժիմեր						-
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	71 741	337 021	-	11 378	(1 528 334)	(1 108 194)

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 19.06.2026թ.և պետք է ընթերցվեն կից ծանոթագրությունների հետ միասին

Տնօրեն՝ Ս. Սահակյան

Գլխավոր հաշվապահ՝ Ս.Վրթանեսյան

«ՍԱՀԱԿՅԱՆ ՇԻՆ» "СААКЯНШИН" "SAHAKYANSHIN" 02224769

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ

	2024թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2025թ դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեություն		
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	745 058	649 528
Իրացումից մուտքեր	880 834	1 767 008
Գործառնական այլ գործունեությունից մուտքեր	1 312 975	106 400
Ընդամենը գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	2 193 809	1 873 408
Նյութերի, ապրանքների ձեռք բերման գծով ելքեր	1 971 863	2 340 146
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով	515 875	700 157
Վճարումներ աշխատակիցներին	1 166 049	991 777
Վճարումներ բյուջե	507 823	1 641 122
Վճարումներ շահութահարկի գծով	700	14 965
Վճարումներ սոցիալական ապահովագրության Հիմնադրամ		40 950
Վճարված տոկոսներ		42 303
այլ վճարումներ	18 889	286 620
Ընդամենը գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր	4 181 199	6 058 040
Ընդամենը գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	- 1 987 390	- 4 184 632
Ներդրումային գործունեություն		
Ներդրումային այլ գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	703 211	286 840
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից մուտքեր	3 241 825	4 515 432
Շահաբաժինների և տոկոսների ստացումից	519 598	5 416
Ներդրումային այլ գործունեությունից մուտքեր		
Ընդամենը ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	4 464 634	4 807 688
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումից ելքեր	23 990	8 108
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների այլ ելքեր	40 100	
Ընդամենը ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր	64 090	8 108
Ընդամենը ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	4 400 544	4 799 580
Ֆինանսական գործունեություն		
Ստացված վարկերից և փոխառություններից մուտքեր		122 384
Ֆինանսական գործունեությունից այլ մուտքեր		
Ընդամենը ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	-	122 384
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից ելքեր	2 507 626	753 830
Վճարված շահաբաժիններ, տոկոսներ, այլ ելքեր	-	-
Ընդամենը ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր	2 507 626	753 830
Ընդամենը ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	- 2 507 626	- 631 446

Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	- 94 472	- 16 498
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	- 1 058	876
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	**649 528**	**633 906**

Տնօրեն՝ Ս. Սահակյան

Գլխավոր հաշվապահ՝ Ս.Վրթանեսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО
REPUBLIC OF ARMENIA YEREVAN CLOSED JOINT-STOCK COMPANY
«ՍԱՀԱԿՅԱՆՇԻՆ»
"СААКЯНШИН"
"SAHAKYANSHIN"
02224769

4.Բացահայտումներ էական հոդվածների վերաբերյալ

4.1 Հիմնական միջոցներ

000 դրամ

	Շենքեր	Կառուցվածքներ	Հողամասեր	Տրանսպորտային միջոցներ	Մեքենաներ և սարքավորումներ	Արտադրատնտեսական գույք	Այլ հիմնական միջոցներ	Օգտագործման համար ոչ վարձվող ՀՄ	Ժամանակավորապես շահագործումից հանված հիմնական միջոց	Ընդամենը
Սկզբնական արժեք										
Առ 31 դեկտեմբերի 2023թ	1 869 491	0	6 766 183	4 307 213	796 693	1 944	98 421	160	0	13 840 105
Ավելացումներ այդ թվում		37 917		7 511	459	0	138	144 898		190 923
Վերագնահատումից										0
Նվազեցումներ	189 250		401 297	26 142				144 898		761 587
Առ 31 դեկտեմբերի 2024թ	1 680 241	37 917	6 364 886	4 288 582	797 152	1 944	98 559	160	0	13 269 441
Ավելացումներ այդ թվում	4 121		2 738 763	43 246	125	917	381	1 081 427		3 868 980
Վերագնահատումից										0
Նվազեցումներ	140 579		4 509 473	41 711	102	125		3 281		4 695 271
Առ 31 դեկտեմբերի 2025թ	1 543 783	37 917	4 594 176	4 290 117	797 175	2 736	98 940	1 078 306	0	12 443 150
Կուտակված մաշվածություն										
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	458 800	0	0	3 578 508	708 840	929	49 475	0		4 796 552
Տարվա մաշվածությունը այդ թվում	64042	1585		224 520	30 902	276	16 224			337 549
Վերագնահատումից										0
Նվազեցումներ	13523			25 104			0			38 627
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	509 319	1 585	0	3 777 924	739 742	1 205	65 699	0	0	5 095 474
Տարվա մաշվածությունը այդ թվում	59 911	1 895		193 806	27 793	290	13 353			297 048
Վերագնահատումից										0
Նվազեցումներ	58 867			25 744	53	65				84 729
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	510 363	3 480	0	3 945 986	767 482	1 430	79 052	0	0	5 307 793

Զուտ հաշվեկշռային արժեք										
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	1 410 691	0	6 766 183	728 705	87 853	1 015	48 946	160	0	9 043 553
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	1 170 922	36 332	6 364 886	510 658	57 410	739	32 860	160	0	8 173 967
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	1 033 420	34 437	4 594 176	344 131	29 693	1 306	19 888	1 078 306	0	7 135 357

Լրիվ մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմում է 3 671 433 հազ.դրամ:

31.12.2025թ-ի դրությամբ առկա են գրավադրված հիմնական միջոցներ:

4.2 Ոչ նյութական ակտիվներ

000 դրամ

	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք		
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	0	0
Ավելացումներ այդ թվում	820	820
Վերագնահատումից		0
Նվազեցումներ	820	820
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	**0**	**0**
Ավելացումներ այդ թվում	820	820
Վերագնահատումից		0
Նվազեցումներ	820	820
Առ 31 դեկտեմբերի 2025թ	**0**	**0**
Կուտակված մաշվածություն		
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**0**	**0**
Տարվա մաշվածությունը այդ թվում	820	820
Վերագնահատումից		0
Նվազեցումներ	820	820
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	**0**	**0**
Տարվա մաշվածությունը այդ թվում	820	820
Վերագնահատումից		0
Նվազեցումներ	820	820
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	**0**	**0**
Զուտ հաշվեկշռային արժեք		
Առ 31 դեկտեմբեր 2024թ.	**0**	**0**
Առ 31 դեկտեմբեր 2025թ.	**0**	**0**

2025 թ դեկտեմբերի 31-ի դրությամբ գրավադրված ոչ նյութական ակտիվների չկան:

4.3 Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ

Տրված փոխառություններ

	31.12.2024թ.		31.12.2025թ.	
	Հարկային բազա	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Հաշվեկշռային արժեք
Երկարաժամկետ փոխառություններ որից	1 288 196	965 011	1 308 356	1 098 604
Ընդամենը	1 288 196	965 011	1 308 356	1 098 604

Փոխառությունները տրամադրված են անտոկոս կապակցվածբ կողմերից և չափվում է ամորտիզացիոն արժեքը կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը (12%)

4.4 Պաշարներ

	31.12.2024թ.	**31.12.2025թ.**
Հումք և նյութեր	186 327	113 876
Կենսաբանական ակտիվներ		
Անավարտ արտադրանք	12 421 702	12 247 037
Պատրաստի արտադրանք	2 750 847	2 164 891
Ընդամենը	15 358 876	14 525 804

2025 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը ունի գրավադրված պաշարներ:

4.5 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

000 դրամ

	31.12.24թ.	31.12.25թ.
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, այդ թվում	**3 361 331**	**3 332 708**
1. Տրված կանխավճարներ	429 766	477 851
2. Առևտրային դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	40 130	49 549
3. Առևտրային դեբիտորական պարտքեր մատուցված ծառայությունների գծով	2 808 414	2 443 685
4. Առևտրային դեբիտորական պարտքեր ասոցացված կազմակերպությունների գծով		
5. Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով, այդ թվում	55	12 072
• *ԱԱՀ*	18	11 711
• *Եկամտահարկ*		
• *Անշարժ գույքի հարկ*	37	
•*Այլ պարտադիր վճար*		361
6. Այլ դեբիտորական պարտքեր	82 966	349 551
Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ		

Առևտրային դեբիտորական պարտքերը կարճաժամկետ են, ուստի դրանց պարտքերի իրական արժեքը էականորեն չի տարբերվում և հավասարվում է հաշվարկային արժեքից:

4.6 Ընթացիկ ֆինանսական ակտիվներ

Տարվա փոխառություններ

000 դրամ

	31.12.2024թ.		31.12.2025թ.	
	Հարկային բազա	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Հաշվեկշռային արժեք
Կարճաժամկետ փոխառություններ	63700	63700	63700	63700
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ				
Ընթացիկ ֆինանսական ակտիվներ				
Ընդամենը	63700	63700	63700	63700

4.7 Դրամական միջոցների և դրանց համարժեքներ

000 դրամ

	31.12.24թ.	31.12.25թ.
Դրամարկղ		
Բանկային հաշիվներ	649 528	633 906
Ընդամենը	649 528	633 906

4.8.Սեփական կապիտալ

4.8.1 Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի զուտ գումարը

4.8.1. 1Հայտարարված և վճարված կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 71 740 422,40 ՀՀ դրամ:

Ընկերության կողմից հիմնադրման ժամանակ հայտարարվել են 760768 հատ բաժնետոմս յուրաքանչյուրը 94 դրամ 30 լումա, որոնք ամբողջությամբ վճարված են:

4.8.2 Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը՝ 337021 հազ. դրամ, որը առաջացել է վերակազմավորումների ընթացքում:

4.8.3 Պահուստային կապիտալ

Պահուստային կապիտալը կազմումէ 11378 հազար դրամ:

4.8.4 Կուտակված վնաս

Ընկերության պարտավորությունները գերազանցել են իր ընդհանուր ակտիվները 31.12.2024թ-ի դրությամբ 225314հազար դրամ, 31.12.2025թ 1108194 հազար դրամ:

Եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվում է, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքը կազմում է բացասական մեծություն կամ օրենքով կամ այլ իրավական ակտերով կանոնադրական կապիտալի նվազագույն չափ սահմանված լինելու դեպքում Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է սահմանված չափից, ապա Ընկերության գործադիր մարմինը պարտավոր է խորհրդին ներկայացնել արտահերթ ժողովի գումարման պահանջ: Նման դեպքերում արտահերթ ժողովում որոշում է կայացվում Ընկերության լուծարման կամ դրա գործունեությունը շարունակելու մասին:

Ընդ որում, գործունեությունը շարունակելու մասին որոշում կարող է ընդունվել, եթե խորհուրդը, իսկ Ընկերությունում խորհուրդ ստեղծված չլինելու դեպքում գործադիր մարմինը ներկայացրել է գրավոր եզրակացություն Ընկերության գործունեությունը զուտ ակտիվների առկա չափի պարագայում շարունակելու նպատակահարմարության և հիմնավորվածության վերաբերյալ՝ հիմք ընդունելով Ընկերության գործունեության ուղղությունները, ոլորտը, առանձնահատկությունները, գործունեության ծրագրերը և այլ հանգամանքներ: Գործունեությունը շարունակելու մասին որոշում ընդունվելու դեպքում Ընկերությունը պարտավոր է այդ մասին 10 աշխատանքային օրվա ընթացքում հայտարարություն տեղադրել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների http://www.azdarar.am պաշտոնական ինտերնետային կայքում և գործունեությունը շարունակելու մասին որոշումը ներկայացնել Ընկերության պետական գրանցումն իրականացրած մարմին:

Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ

4.9.1. Երկարաժամկետ վարկեր

000դրամ

	31.12.24թ.		31.12.25թ.	
	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա
Մնացորդը տարեսկզբին	13 074 640	13 074 640	11 097 652	11 097 652
Ստացվել է տարվա ընթացքում	3 235 687	3 235 687	1 648 071	1 648 071
Մարվել է տարվա ընթացքում	5 212 675	5 212 675	1 460 942	1 460 942
Մնացորդը տարեվերջին	11 097 652	11 097 652	11 284 781	11 284 781

Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ

4.10.1. Կարճաժամկետ վարկեր

000դրամ

	31.12.24թ.		31.12.25թ.	
	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա
Մնացորդը տարեսկզբին	359 935	359 935	829	829
Ստացվել է տարվա ընթացքում	35 338	35 338	15 780	15 780
Մարվել է տարվա ընթացքում	394 444	394 444	15 780	15 780
Մնացորդը տարեվերջին	829	829	829	829

0.2. Կարճաժամկետ փոխառություններ

000դրամ

	31.12.24թ.		31.12.25թ.	
	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա
Մնացորդը տարեսկզբին	15 000	15 000	15 000	15 000
Ստացվել է տարվա ընթացքում		0	100 000	100 000
Մարվել է տարվա ընթացքում		0		
Մնացորդը տարեվերջին	15 000	15 000	115 000	115 000

4.11 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

000 դրամ

	31.12.24թ.	**31.12.25թ.**
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր, այդ թվում	**17 655 637**	**16 584 701**
1. Ստացված կանխավճարներ	15 437 817	15 591 682
2. Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	1 445 384	675 417
3. Կրեդիտորական պարտքեր ստացված ծառայությունների գծով	242 564	167 243
4. Կրեդիտորական պարտքեր պարտքեր այլ կապակցված կազմակերպությունների գծով		
5. Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով, այդ թվում	343 779	37 540
• *ԱԱՀ*	223 546	
• *Եկամտահարկ*	82 712	25 406
• *Ակցիզային հարկ*		
• *Անշարժ գույքի հարկ*	1	7 108
•*Այլ պարտադիր վճար*	37 520	5 026
6. Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	150 669	107 591
7. Կրեդիտորական պարտքեր պարտադիր սոց.ապ.գծով	35 212	5 228
8. Այլ կրեդիտորական պարտքեր	212	0

Առևտրային կրեդիտորական պարտքերը կարճաժամկետ են

չեն պարունակում ֆինանսավորման նշանակալի բաղադրիչ և չափվում են գործարքի գնով:

Ընկերությունը ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ,

որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարումը:

*4.12. **Պահուստ***

000 դրամ

	31.12.24թ.	31.12.25թ.
Պահուստ արձակուրդային վճարման գծով	112747	79461
Ընդամենը	**112747**	**79461**

4.13. Հասույթ

000դրամ

	31.12.24թ.	31.12.25թ.
Արտադրանքի իրացում	1 776 063	263 932
Ապրանքի իրացում	39 567	27 987
Ծառայությունների մատուցում	722 760	291 890
Ընդամենը	2 538 390	583 809

4.14. Վաճառքի ինքնարժեք

'000դրամ

	31.12.24թ.	31.12.25թ.
Փոխհատուցումներ աշխատակիցներին		454640
Մաշվածության ծախս		35315
Նյութական ծախսեր		1467189
Այլ ծախսեր		122461
Ընդամենը	**3 246 791**	**2079605**

4.15.Այլ եկամուտներ

'000դրամ

	31.12.24թ.	31.12.25թ.
Հիմնական միջոցների օտարումներից օգուտ	1 368 654	2 856 232
Անհատույց տրված ակտիվներից եկամուտ		
Ֆին. գործիքների վերաչափումից օգուտ	163 027	
Նյութական վնասի փոխհատուցումից եկամուտ	13 199	11 220
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	151 829	
Պարտավորության ներումից եկամուտ		
Հաշվետու տարվա հարկային տույժերի և տուգանքների ներումից եկամուտ		
Ֆինանսական ներդրումից եկամուտներ		
Դեբիտորական պարտքերի պահուստի հակադարձումից		
Այլ պաշարների օտարումից եկամուտ	44 458	243 368
Գույքագրումից ավելցուկից եկամուտ		
Գործառնական վարձակալությունից եկամուտ	472 004	496 461
Տոկոսային եկամուտ	656 939	120 608
Կրեդիտորական պարտքերի դուրսգրում		
Այլ եկամուտներ	100 389	34 326
Ընդամենը	**2 970 499**	**3 762 215**

4.16. Վարչական և այլ ծախսեր

000դրամ

	31.12.24թ.	31.12.25թ.
1. Վարչական ծախսեր, այդ թվում	731 752	1 150 248
Փոխհատուցումներ աշխատակիցներին	402 774	389 641
Սոցիալական ապահովագրության վճարներ		
Հիմնական միջոցների մաշվածության, նորոգման և սպասարկման գծով ծախսեր	49 813	50 280
Գործուղման , ներկայացուցչական և վերապատրաստման ծախսեր		1 529
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	4 142	4 826
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	148 498	33 016
Աուդիտորական և խորհրդատվակա ծախսեր	10 484	567 609
Բանկային, ապահովագրության, պահպանության և տրանսպորտային ծախսեր	8 500	3 707
Չփոխհատուցվող ծախսեր հարկերից և տուրքերից	67 219	72 933
Վարչական այլ ծախսեր	40 322	26 707
2. Իրացման ծախսեր	361814	244347
Փոխհատուցումներ աշխատակիցներին		
Պահեստում գտնվող արտադրանքի,ապրանքների փաթեթավորման, տեսակավորման և պահպանման ծախսեր		
Բանկային ծառայությունների ծախսեր, ապահովագրության ծախսեր		
Տրանսպորտային և բեռնափոխադրման ծախսեր		
Հիմնական միջոցների մաշվածության, նորոգման և սպասարկման գծով ծախսեր	333 247	209 642
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր		
Մարկետինգի և գովազդի ծախսեր	28 139	24 865
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր		
Այլ իրացման ծախսեր	428	9 840
3. Գործառնական այլ ծախսեր	165 797	955 762
Կասկածելի դեբիտորական պարտքերի պահուստի ստեղծման ծախսեր		462 478
Հիմնական միջոցների մաշվածության, նորոգման և սպասարկման գծով ծախսեր		
Այլ պաշարների վաճառքից ծախսեր		
Անհուսալի դեբիտորական պարտքի դուրս գրում		
Պաշարների արժեքի փոփոխություններից ծախսեր		310
Վարձակալության ծախսեր		
Ֆինանսական գործիքների վերաչաձումից վնաս		1 756
Ծախսեր տույժերից, տուգանքներից, դատական ծախսեր	5 857	73 949
Արժեքների պակասորդներ և փչացումից կորուստներ, խոտանված ապրանքի հետ կապված ծախսեր	169	
Գործառնական այլ ծախսեր	159 771	417 269
4. Այլ ոչ գործառնական ծախսեր	10 912	238 045
Անհատույց տրված ակտիվների գծով ծախսեր	10 912	103 403
Հիմնական միջոցների օտարումից վնաս		
Փոխարժեքային տարբերությունից վնաս		134 642
Այլ ծախսեր		
Ընդամենը	1 270 275	2 588 402

4.17. Ֆինանսական ծախսեր

000դրամ

	31.12.24թ.	31.12.25թ.
Ստացված վարկերի հետ կապված հաշվեգրված տոկոսներ	577 292	609 624
Ստացված փոխառությունների հետ կապված հաշվեգրված տոկոսներ		
Ընդամենը	**577 292**	**609 624**

4.18. Շահութահարկ

4.18.1 Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)

	2024թ Հազ.դրամ	2025թ Հազ.դրամ
Ընթացիկ հարկի գծով	7666	10835
Հետաձգված հարկի գծով (ծնթ 4.18.3)	65 352	-59 562
Ընդամենը	**73 018**	**-48 727**

4.18.2 Հետաձգված հարկային ակտիվ/պատավորություն)

	2024թ Հազ.դրամ	2025թ Հազ.դրամ
Տարեսկզբի մնացորդ	158 412	93 060
Շահույթում կամ վնասում ճանաչված փոփոխություն	-65 352	59 562
Այլ համապարփակ արդյուքում ճանաչված		
տարեվերջի մնացորդ	**93 060**	**152 622**

4.18.3Հետաձգված հարկայի ակտիվ/պատավորություն)

շարժ

2024	Սկզբնական մնացորդ	Ճանաչված շահույթում/ վնասում	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	Վերջնական մնացորդ
Հիմնական միջոցների գծով	25 459	600		26 059
Արձակուրդային պահուստի գծով	32 179	-11 885		20 294
Փոխառությունների գծով	100 774	-54 067		46 707
Դեբիտորական պարտքերի գծով պահուստ				0
Ընդամենը	**158 412**	**-65 352**		**93 060**

2025	Սկզբնական մնացորդ	Ճանաչված շահույթում/ վնասում	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ	Վերջնական մնացորդ
Հիմնական միջոցների գծով	26 059	85 971		112 030
Արձակուրդային պահուստի գծով	20 294	-5 991		14 303
Փոխառությունների գծով	46 707	-20 418		26 289
Դեբիտորական պարտքերի գծով պահուստ	0			0
Ընդամենը	**93 060**	**59 562**		**152 622**

4.18.4 Արդյունավետ հարկային դրույքի համադրում

Հաշվետու տարվա համար Հայաստանի Հանրապետության ,,Շահութահարկի մասին,, օրենք համաձայն շահութահարկի դրույքաչափը սահմանված է 18% (2025-18%): Տարվա փաստացի հարկային ծախսերի և Հայաստանում շահութահարկի սահմանված դրույքի (18%) միջև տարբերության մանրամասները ներկայացված են ստորև

	2024թ Հազ.դրամ	%	2025թ Հազ.դրամ	%
Շահույթ (վնաս) մինչև հարկումը ըստ ՖՀՄՍ-ների	414 531		-931 607	
Շահութահարկի գծով ծախս	74 616	18%	-167 689	18%
Այլ չնվազեցվող ծախսերի (չհարկվող եկամուտների հարկային)հետևանք	-1597,58	0%	118962	-12,8%
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) և հարկի արդյունավետ դրույքը	73 018	18%	-48 727	5,2%

5.Ֆինանսական գործիքներ

5.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.15-ում:

5.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

000դրամ

	31.12.24թ.	31.12.25թ.
Փոխառություններ	965 011	1 098 604
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	2 931 510	2 842 785
Մնացորդը դրամարկղում և բանկում	649 528	633 906
Այլ ֆինանսական ակտիվներ	63 700	63 700
Ընդամենը	**4609749**	**4638995**

Ֆինանսական պարտավորություններ

000դրամ

	31.12.24թ.	31.12.25թ.
Վարկեր և փոխառություններ	11 472 587	11 400 610
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	1 874 041	955 479
Այլ ֆինանսական պարտավորություններ		
Ընդամենը	**13 346 628**	**12 356 089**

Տես՝ ծանոթագրություն 3.15-ը՝ յուրաքանչյուր ֆինանսական գործիքի կատեգորիայի գծով հաշվապահական հաշվառման քաղաքականության նկարագրության համար:

6. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ընկերությունն իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է պարտքային և իրացվելիության ռիսկերի:

7.Ֆինանսական ռիսկի գործոններ

7.1 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել: Ընկերությունը առևտրային դեբիտորական պարտքերի դիմաց երաշխիքներ չի պահանջում:

7.2 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը վերաբերում է Ընկերության կողմից իր պարտվորությունները ժամանակին մարելուն և անմիջականորեն կապված է Ընկերության դրամական միջոցների հավաքագրման հետ, ինչը նկարագրված է վերը նշված պարտքային ռիսկերում:

8.Իրական արժեքի չափում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները չափվում են իրենց իրական արժեքով և իրենցից ներկայացնում են առևտրային դեբիտորական պարտքերը , տրված փոխառությունները, դրամական միջոցները, վարկերը և ստացված փոխառությունները, առևտրային կրեդիտորական պարտքերը: Դրանց գնահատված իրական արժեքները մոտավորապես հավասարվում են հաշվեկշռային արժեքին, հաշվի առնելով դրանց կարճաժամկետ բնույթը

9. Պայմանականություններ

9.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում:

Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմնափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով և միջազգային տնտեսական ճգնաժամը:

Հետևաբար, Ընկերության ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ճշգրտումների ազդեցությունը, եթե այդպիսիք կան, որոնք կարող էին անհրաժեշտ համարվել, եթ ներկա համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը Հայաստանում նկատելի և արժանահավատորեն գնահատելի լիներ:

10. Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությունը՝ իր ակտիվների և գործունեության ընդհատման արդյունքում հասցված վնասի ապահովագրություն չունի: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական դրության վրա:

11. Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա է են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոնշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապասխան հատկացումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

12.Իրավական պարտավորություններ

Առ 31 դեկտեմբերի 2025թ դրությամբ, ինչպես նաև մինչև այս ֆինանսական հաշվետվության հաստատման ժամանակակարգերը ընկերությունը ներգրված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ ընկերության ֆինանսական հաշվարկների վրա:

13. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Ի լրումն Ռուսաստանում և տարածաշրջանում քաղաքական և տնտեսական զարգացումների ղեկավարությունը հետևում է տնտեսական և քաղաքական իրավիճակների ընթացիկ փոփոխություններին, ձեռնաչկում է միջոցներ, որոնք անհրաժեշտ են Ընկերության գործունեության կայունությունը և զարգացումը ապահովելու համար: Թեև այս զարգացումների արդյունքը դժվար է կանխատեսել, ղեկավարությունը համոզված է , որ Ընկերության գործառնությունները նշանակալի բացասական ազդեցություն չեն ունենա:

12 Համադրելի ֆինանսական հաշվետվությունների վերաներկայացում

Նախորդ տարիներին առնչվող սխալների բացահայտման պատճառով, ընկերությունը որոշել է վերաներկայացնել

նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունները համաձայն ՀՀՄՍ 8 <<Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ>> կապված ենհիմնական միջոցների գծով՝ 2023թ. 9053046 հազ. դրամի փոխարեն 9043554 հազ. դրամ, 2024թ.՝ 8185636 հազ. դրամի փոխարեն 8173967 հազ. դրամ, պաշարների գծով 2024թ. 15458459 հազ. դրամի փոխարեն 15358876 հազ. դրամ, դեբիտորական պարտքրի գծով 2024թ. 3600440 հազ. դրամի փոխարեն 3361331 հազ. դրամ,առևտրային կրեդիտորական պարտքերի գծով՝ 17902328 հազ. Դրամի փոխարեն 17655637 հազար դրամ:

13. Կապակցված կողմեր և գործարքներ նրանց միջև

13.1 Վերահսկողության փոխհարաբերություն

Ընկերության մայր, դուստր, ասոցացածված կազմակերպություն չունի և չի վերահսկվում այլ կազմակերպության կողմից:

Բաժնեմասի 99.9 % -ը պատկանում է << քաղաքացի Սուրեն Սահակյանին, որի հետ գործարքները ներկայացված են ստորև:

000դրամ

Գործարքի անվանումը	Գործարքի գումար	Գործարքի գումար	Չմարվող մնացորդ	Չմարվող մնացորդ
	31.12.24թ.	31.12.25թ.	31.12.24թ.	31.12.25թ.
Փոխառության ստացում		149347		
Փոխառության մարում	1224496	129189	1224496	1224654

13.2. Ղեկավարության հատուցումները

Ընկերության առանցքային կառավարչական անձնակազմը ստացել է հետևյալ հատուցումները, որոնք ներառված են անձնակազմի գծով ծախսումներում

000դրամ

	31.12.2024	31.12.2025
Պաշտոն	Աշխ.	Աշխ.
Տնօրեն	33244	30306
Փոխտնօրեն	12570	11769
Փոխտնօրեն	7690	7650
Ընդամենը	**53504**	**49725**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից՝ 19.06.2026թ.և պետք է ընթերցվեն կից ծանոթագրությունների հետ միասին

Գլխավոր տնօրեն՝ Ս. Սահակյան

Գլխավոր հաշվապահ՝ Ս.Վրթանեսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ք. ԵՐԵՎԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
REPUBLIC OF ARMENIA ЕРЕВАН ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО
YEREVAN CLOSED JOINT-STOCK COMPANY
«ՍԱՀԱԿՅԱՆՇԻՆ»
"СААКЯНШИН"
"SAHAKYANSHIN"
02224769